ՄԱՆԿԱՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ
Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,
ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ vardgohar@yandex.ru
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ amovsisyanm@mail.ru

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել մանկամահացության պատճառների կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ մարզերի և Երևան քաղաքի տվյալներով: Հաշվարկվել է մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքը ՀՀ մարզերի և Երևանի տվյալներով, որոնք էլ հիմք են հանդիսացել բացարձակ և հարաբերական մի շարք ցուցանիշներով գնահատել մանկամահացության հիմնական պատճառների կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվությունը ուսումնասիրվող տարիներին: 2019թ.-ը 2016թ.-ի նկատմամբ կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատման ինտեգրալ ցուցանիշը կազմել է մեկ, որը վկայում է տվյալ մահվան պատճառի կտրուկ կառուցվածքային տեղաշարժի մասին: Համաձայն վերլուծության արդյունքների՝ որքան էլ որ առանձին պատճառներից մահվան դեպքերի կառուցվածքային տեղաշարժերը բնութագրվել են նշանակալի ինտենսիվությամբ, այնուամենայնիվ, ՀՀ-ում բոլոր պատճառներից մահվան դեպքերի կառուցվածքի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Բանալի բառեր՝ *մանկամահացություն, մահվան հիմնական պատճառներ, կառուցվածքային տեղաշարժեր, ինտենսիվություն:*

Հայտնի է, որ վիճակագրական տվյալները վերլուծելիս անհրաժեշտ է երևույթները համեմատել ժամանակի և տարածության մեջ, ուսումնասիրել նրանց փոփոխության օրինաչափությունները և զարգացումը, ինչպես նաև համակցության կառուցվածքը: Սակայն այդ խնդիրը հնարավոր չէ իրագոր-

ծել բացարձակ մեծություններով, հետևաբար անհրաժեշտ է կիրառել հարաբերական մեծություններ[1]:

Կառուցվածքային հարաբերական մեծությունները հնարավորություն են տալիս համեմատել միևնույն համակցության կառուցվածքը ժամանակի տարբեր պահերի դրությամբ:

Սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկան ուսումնասիրելիս անհրաժեշտ է ամբողջությամբ գնահատել կառուցվածքային փոփոխությունները, որոնք բնութագրում են տվյալ երևույթի կառուցվածքային տեղաշարժը կամ ընդհակառակը՝ կայունությունը:

Սույն հետազոտությունում մանկամահացության հիմնական պատճառների կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով ուսումնասիրելու նպատակով մանկամահացության գործակիցների հիման վրա մեր կողմից հաշվարկվել է մանկական մահերն ըստ մահվան հիմնական պատճառների: Ստորև ներկայացվել է մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևանի:



Գծապատկեր 2.3.1. Մանկական մահերի տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012թ.:

[1] Елисеева И. И. , Юзбашев М. М., Общая теория стаистики: Учебник / Под ред. И. И. Елисеевой, 5-е изд., перераб. и доп., М., Финансы и статисика, 2004, 656с., ст. 621-624



Գծապատկեր 2.3.2. Մանկական մահերի տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2016թ.



Գծապատկեր 2.3.3. Մանկական մահերի տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2019թ.:

ՀՀ մարզերի և Երևանի կտրվածքով մահվան հիմնական պատճառների կառուցվածքի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ 2012թ.-ին մարսողական օրգանների հիվանդություններից մահվան բոլոր դեպքերը բաժին են ընկել Երևանին: Բնածին անկանոնություններից և ձևախախտումային խանգարումներից մահվան դեպքերի 33.3 %-ը գրանցվել է մայրաքաղաքում: Դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից

մահվան դեպքերի 33. 3%-ը արձանագրվել է Արմավիրի մարզում, հարկ է նշել, որ նշված պատճառից մահվան դեպք մի շարք մարզերում, այդ թվում Երևանում չի գրանցվել:

2016թ. շնչառական օրգանների հիվանդություններից մանկական մահերի ավելի քան 20.0%-ը բաժին է ընկել Արարատի մարզին: Դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահվան դեպքեր գրանցվել են միայն Արագածոտնի (41.0%), Արմավիրի (41.0%) և Շիրակի (20.4%) մարզերում:

2019թ. վարակային և մակաբուծային հիվանդություններից մահվան դեպքեր մարզերում չեն գրանցվել: Շնչառական օրգանների հիվանդություններից մանկական մահերի կեսից ավելին հավասարաչափ բաժին է ընկել Լոռվա և Գեղարքունիքի մարզերին:

Որպես ամփոփում՝ կարելի է նշել, որ ուսումնասիրվող տարիներին շուրջծնական շրջանում առաջացած առանձին վիճակներից մահվան դեպքերը գերակշռել են Երևանում (22.4%-26.1%): 2012թ. և 2016թ. իր ունեցած կշռով մայրաքաղաքին հաջորդել է Շիրակի մարզը՝ համապատասխանաբար 17.5% և 13.2%, իսկ 2019թ. Երևանին հաջորդել է Կոտայքի մարզը՝ 13.8%:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող տարիներին բոլոր պատճառներից մահվան դեպքերի շուրջ մեկ քառորդը գրանցվել է մայրաքաղաքում:

Ինչպես գիտենք, կառուցվածքային տեղաշարժերի ուժգնությունը կախված է տեսակարար կշիռների բացարձակ հավելաճերի և աճի տեմպերի տատանումներից:

Հոդվածում կատարվել է մահվան հիմնական պատճառների կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրություն՝ բացարձակ և հարաբերական ցուցանիշներով, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի: Հաշվարկները ամփոփ տեսքով ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատման ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:

Մահվան պատճառները	Տարիներ	Կառուցվածքային բաշխվածության տեղաշարժերի ինտենսիվության ցուցանիշ	Կառուցվածքային տեղաշարժերի բաշխվածության ցուցանիշ	Կառուցվածքային տեղաշարժերի միջին քառակուսային ցուցանիշ	Կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատման ինտեգրալ ցուցանիշ
1	2	3	4	5	6
Բոլոր պատճառներից	2012/2016	8.4	1.86	25.5	0.121
	2016/2019	10.5	2.42	23.9	0.157
Վարակային և մակաբուծային հիվանդություններից	2012/2016	44.3	10.72	104,7	0.610
	2016/2019	63.6	20.96	70,5	0.632
Շնչառական օրգանների հիվանդություններից	2012/2016	29.7	6.26	118,9	0.401
	2016/2019	34.2	7.63	78,1	0.478
Մարսողական օրգանների հիվանդություններից	2012/2016	75,0	26,1	6,8	0,775
	2016/2019	75,0	18,5	36,3	0,775
Բնածին անկանոնություններից և ձևախախտումային խանգարումներից	2012/2016	26.9	6.18	66.4	0.359
	2016/2019	26.1	5.67	41.6	0.345
1	2	3	4	5	6
Շուրջծնական շրջանում առաջացած առանձին վիճակներից	2012/2016	12.6	2.70	44.2	0.176
	2016/2019	11.8	2.71	28.5	0.178
Դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից	2012/2016	50.0	12.8	41.8	0.559
	2016/2019	100.0	24.1	27.3	1.000
Այլ պատճառներից	2012/2016	22.0	4.68	60.8	0.274
	2016/2019	26.0	5.97	58.1	0.327

Վերլուծության արդյունքները վկայում են, որ համեմատվող տարիներին դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մանկական մահերի կառուցվածքային տեղաշարժերը նշանակալի են, մաս-

նավորապես, 2019թ.-ը 2016թ.-ի նկատմամբ կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատման ինտեգրալ ցուցանիշը կազմել է մեկ, որը վկայում է տվյալ մահվան պատճառի կտրուկ կառուցվածքային տեղաշարժի մասին. եթե 2016թ. նշված հիվանդությունից մահվան դեպքեր գրանցվել են միայն Արագածոտնի, Արմավիրի և Շիրակի մարզերում, ապա 2019թ.՝ Երևանում, Արարատում, Գեղարքունիքի և Լոռվա մարզերում:

2016թ.-ը 2012թ.-ի նկատմամբ մարսողական օրգանների հիվանդություններից մանկական մահերի կառուցվածքային տեղաշարժերը կարելի է համարել էական, քանի որ կառուցվածքային բացարձակ տեղաշարժերի ինտենսիվության ցուցանիշը գերազանցել է 20%-ը՝ կազմելով 75. 0%:

Համեմատվող տարիներին վարակային և մակաբուծային հիվանդություններից մահերի կառուցվածքային տեղաշարժերը ևս կրել են ինտենսիվ բնույթ:

Ուսումնասիրվող տարիներին շնչառական օրգանների հիվանդություններից և բնածին անկանոնություններից ու ձևախախտումային խանգարումներից մահվան դեպքերի կառուցվածքը բնութագրվել է կայունությամբ:

Հարկ է նշել, որ համեմատվող տարիներին ՀՀ մարզերում և Երևանում շուրջծնական շրջանում առաջացած առանձին վիճակներից մահվան պատճառի կառուցվածքային ինտենսիվ տեղաշարժ տեղի չի ունեցել:

Վերլուծության արդյունքերից ակնհայտ է՝ որքան էլ որ առանձին պատճառներից մահվան դեպքերի կառուցվածքային տեղաշարժերը բնութագրվել են նշանակալի ինտենսիվությամբ, այնուամենայնիվ ՀՀ-ում բոլոր պատճառներից մահվան դեպքերի կառուցվածքի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020, էջ 65-66:
2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013, էջ 69-70:
3. Елисеева И. И., Юзбашев М. М., Общая теория стаистики: Учебник/Под ред. И.И. Елисеево, 5-е изд., перераб. и доп., М., Финансы и статисика, 2004, 656с., ст. 621-624.

THE ANALYSIS OF STRUCTURAL SHIFTS OF THE MAIN CAUSES OF INFANT MORTALITY BY THE DATA OF REGIONS OF RA AND CITY YEREVAN

VARDANYAN GOHAR
The PHD in Economy, Professor
e-mail: vardgohar@yandex.ru
MOVSISYAN ASTGHIK
Lecturer
e-mail: amovsisyanm@mail.ru

The main goal of this research is to analyse the structural shifts of the causes of infant mortality by the data of regions of RA and city Yerevan. The structure of the main causes of infant mortality has been calculated by data of regions of RA and city Yerevan. It was the base for estimating the structural shifts of infant mortality by absolute and relative indicators. In 2019 comparing with 2016 the integral indicator of intensive estimation of structural shifts was 1, hence structural shifts were sharp. According to the results of the analyses, the structural shifts of the main causes of infant mortality were significantly intensive; nevertheless, the structural shifts of all causes of infant mortality were not significant. It was the base for estimating the structural shifts of infant mortality by absolute and relative indicators in studied years.

Key words: *infant mortality, the main causes of death, the structural shifts, intensivity.*

АНАЛИЗ СТРУКТУРНЫХ СДВИГОВ ОСНОВНЫХ ПРИЧИН МЛАДЕНЧЕСКОЙ СМЕРТНОСТИ ПО ДАННЫМ МАРЗОВ РА И ГОРОДА ЕРЕВАНА

ВАРДАНЯН ГОАР
Кандидат экономических наук, профессор
электронная почта:vardgohar@yandex.ru
МОВСИСЯН АСТХИК
Преподаватель
электронная почта: amovsisyanm@mail.ru

Основная цель исследования - проанализировать структурные сдвиги причин младенческой смертности по данным марзов РА и города Еревана.

Структура основных причин младенческой смертности рассчитана по данным марзов РА и города Еревана. Это послужило базой для оценки структурных сдвигов младенческой смертности по абсолютным и относительным показателям в исследуемые годы. В 2019 году по сравнению с 2016 годом интегральный показатель интенсивной оценки структурных сдвигов составил 1, следовательно, это были резкие структурные сдвиги. По результатам анализа, хотя структурные сдвиги основных причин младенческой смертности были значительно интенсивными, тем не менее структурные сдвиги по всем причинам младенческой смертности не были значительными.

Ключевые слова: *младенческая смертность, основные причины смерти, структурные сдвиги, интенсивность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 11.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 11.09.2021թ.: